ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

«31» 07 2017թ. N 58-Ա/3

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ» ՈՍԿԵ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, դրա կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1294-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1111-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 15-րդ կետի 18-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շինարարի տոնի կապակցությամբ, ինչպես նաև երկարամյա աշխատանքային գործունեության և շինարարության բնագավառում ներդրած ավանդի համար «Քաղաքաշինության բնագավառում նշանակալի ավանդի համար» ոսկե մեդալով պարգևատրել.

1) «Բարս» սահմանափակ պատասխանատվության ընկերության տնօրեն Մարինա Չատինյանին,

2) «Մեխտրանս» բաց բաժնետիրական ընկերության տնօրեն Հայկասար Գրիգորյանին,

3) «Աղյուս» սահմանափակ պատասխանատվության ընկերության տնօրեն Նիկոլայ Վանյանին,

4) «Հորիզոն-95» սահմանափակ պատասխանատվության ընկերության արտադրատեխնիկական վարչության պետ Դավիթ Բաբայանին,

5) ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության պետ – ՀՀ քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչ Արամ Մելքոնյանին,

6) ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմի շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության պետ Արտավազդ Նազարեթյանին:

Ն.ՍԱՐԳՍՅԱՆ

«31» 07 2017թ.
ք. Երևան